



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



891.99
7-22.

891.99 2184

h-22 | Кендиргиз

Курьеры пожалуйста

lip & lip key

014 4478 24/1/80

11-448	18/10/80
--------	----------

ՀՐԱՏ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՅԻ № 10.

Հ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆ

59

ବିନୟ-ବିହାର



91.99

22

ԲԺ. Ա. ԲՈՒԳՈՒՂԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Առաջին օգնություն մինչև բժշկի գալը (սպառ.) 5 կ.
2. Վարակիչ հիւանդություններ 5 »
3. Ինչ է սիֆիլիսը 5 »
4. Առողջապահական զրոյցներ 5 »
5. Ինչ է ժուժկալուծիւնը 5 »
6. Ինչ է անառակությունը 5 »
7. Վեներական ախտեր 5 »
8. Աչակերտի առողջապահություն 2 »
9. Երեւորները 10 »
10. Սիֆիլիս (բարեկիրորուած) 10 »
11. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ 10 »
12. Գեղձախտ (զօլոտուխտ) 10 »
13. Ուլ է յանցաւորը 15 »
14. Կարիք և բարեգործություն 15 »
15. Ժառանգականություն և դաստիարակություն 15 »
16. անկավարժական համառօտ զրոյցներ 15 »
17. արմամարդություն (25 պատկերով) 20 »
18. Առողջապահ, կան նուէր նորատի կանանց 20 »
19. Կինը և տղամարդը 15 »
20. Վիրաբուժական հիւանդություն և օպերացիա 5 »
21. Ինչ է կաշու հիւանդությունը 15 »
22. Երիտասարդություն և ծերություն 15 »
23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին 20 »
24. Ուղեղի սիֆիլիսը (զլխի և ողնաշարի) 20 »
25. Ստամոքսի կատարը 20 »
26. Քուն և երազ (մի պատկերով) 25 »
27. Մեծագիր պատկեր «Քուն և երազ» առանձին 10 »
28. Գործարան թէ երկրագործություն 15 »
29. Սնապաշտություն ու կախարդություն 20 »
30. Մտերմական խորհրդներ պատանիներին 20 »
31. Գոյություն կոիւ 20 »
32. Ռուզովֆ Վիրսով հրառ. Յ. Արամեանցի 25 »

Դ Ի Մ Ե Լ Ի թիֆլիս Կենդր. նախկան և Գուտտենբերգ,
Բաքու Պրոմեթէոս զրախանութներին.

Պահեստը գտնուում է Պետերբուրգ,
«Պուշկինեան տպարան», Լեշտուկով փողոց, 4

91.99

2-22

պր.

ՀՐԱՏ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՅԻ

Հ. ՀՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

59

ՀՊԱՐՏ ՀՈԳՈՒ
ԵՐԳԵՐԻՑ

Дозволено цензурою, С.-Петербургъ, 14 Декабря 1904 года.

Պատերազմ 1905
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Մ Ա Յ Ր Ի Կ Ի Ս

Կաթողին Մէրի՛կ, հեռու ասիերից
Ես Քեզ եմ ուղղում իմ երգն ու դաշնակ.
Աշխարհի դարգով լեցուն իմ սրտից,
Օ՛, չի հեռանալ քո սուրբ չիշատակ...
Ա՛խ, թէպէտ վաղուց ցուրտ աճիւն դառած
Նինչ ես վայելում սուրբ հողի զրկում,—
Շիրիմիդ չորս դին ալ բալն ու կանաչ
Թախծոտ մրմունջով երգեր են հնչում,
Եւ թէպէտ վերջին անջատման ժամին,
Երբ դու հեռացար անյայտի աշխարհ,
Ո՛հ, ես չըկայի, Մէրի՛կ իմ անգին,—
Թափառում էի երկիրներ օտար,—
Բայց ես չիշում եմ, օ՛, ես լաւ գիտեմ
Քո սիրտը զթոտ, ազնիւ, սիրառատ.
Այս կեանքի ճամբին քո շունչն է վսեմ,
Որ չոյս է սփռում իմ սրտին ազատ...
Ախ, Անուշ Մէրի՛կ, Դու որ իբր հողի
Անմեռ ես վեհ-վեր յուշերիս դաշտում,
Այս ջերմ երգերը շիթով արցունքի
Անմահ անունիդ ու քեզ եմ բերում...

1904. սեպտեմբեր

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Թող հալածւեմ ես...

Թող զո՞ռ, երկաթէ հալածանքն յամառ
Ինձ միշտ հետեւէ, որպէս ուրւական,
Աքսոր Թող ընկնեմ աշխարհէ աշխարհ
Եւ էլ չունենամ ընկեր, ապաստան...
Ես չեմ ափսոսալ...

Հող չէ՛, Թող լինի.

Որպէս կախարդիչ սուրբ վերջալոյսին,—
Որ մահ ու կեանքի մէջն է հրդեհւած,
Երբ վառ յոյսերի ու վսեմ դարնան
Ըստինքը կենսոտ սրտի շրթերից
Վանոււմ է յանկարծ... դանդաղ ու դաժան
Մռայլի ոգին իր մօր արդանդից
Ելնում է առ դահ...

Եւ խաւարահոս իր շունչը մուժ-մէդ
Փչում աշխարհի անփալլ երեսին.
Եւ սև սուերներ, որպէս դահիճներ,
Դժոխք նալւածքով սուրում են չորս դին

Եւ վեհ արեւի, վսեմ արեւի
Յուլքերը վերջին զոհում, հայտնում...
Այդպէս էլ մարդիկ
Թող դուժը մոռցած՝ կեանքի ամբողջ
Ինձ միշտ հալածեն, պղծեն իմ անուն...
* * *

Որպէս մորկի ահեղ ժամերին
Ամպերը մռայլ բանակ առ բանակ
Ծրարում են խիտ երբեք խորին,—
Ծանր, դժոխածին փորձանքը դաժան
Եւ վհատութեան յորձանքն ահաւոր
Թող սիրաս ծածկեն, կաշկանդեն հողիս...
Պարսաւր դժնեայ, հալածանքը դոռ,—
Որպէս նենգ հոյժեր, որ իբր բնութեան
Կրճաքոյս կամքի անմիտ երակներ,
Հոսում են թափոտ... շնչով չաղթական
Քշում, հալածում մտախոհ ամպեր,—
Անգութ, անխնայ թող ինձ հետեւեն...
Ու ես թափառեմ չաւերժ անրնկեր...
Ինչ կուզէ, լինի...

* * *

Բայց ուր էլ գնամ,
Որտեղ էլ լինեմ չաղթ ժամանակի
Խորխտ ալևոր, փրփրուն ալեաց մէջ,
Ինձ հետ կ'լինի Անհաս իմ փառքի
Պսակը վսեմ—Ճակտիս վշտաէջ...
Եւ ինչ էլ լինի.

Արար Աշխարհը Աստուծ իր կազմով
Դժոխք ծաւալէ, աւեր ստանայ.
Օ՛, միայն իմ մէջ հպարտ, կենսագով
Իմ գիտակցութիւնն միշտ անչաղթ մնայ...
Թող ես հալածւեմ.
Մեծ Ժամանակի ցանցում հրահեր
Ես ուր էլ լինեմ,
Ամեն տեղ հպարտ իմ միտքն ու տենչանք,
Որպէս անմեկին ու շերժ ընկերներ,
Ինձ հետ կը լինեն. և իբր արեգակ
Յաւերժ կը շողան ազատանէր
Հողուս երկնքում...
Թող ես հալածւեմ...

1904. Մայիս

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ը

Խաչ. Կարծ-ին.

Եւ իմ Սիրարդ դժուրք, և՛ իմ Կուրծքը արնոտ...
Ու ես ծռենկ չոքեցի վշտաբուխ այս կեանքի
Սեղանի առաջ...

Եւ կեանքի դաշտերից ու սրտի խորանից
Սև ցաւի ու արեան մտացիք խիտ ամպեր,
Որպէս լայն կնճիռներ, յորդ եկան դիզւեցին
Իմ Ազատ ճակատին...

Եւ Աչերս յառած—իմ Աչերն արնաշիթ,
Ու հալեացքս պղտոր—և ցաւոտ իմ դէմքին
Հոժ դժոխք էր խաղում... և ճակտիս տարածւած
Վշտագեղ, կնճռոտ ամպերի շարքերում
Մերթ Կայծակ էր ցոյլում, սև Կայծակ էր լողում,
Եւ ես համր էի... լայ...

Կեանքի ծովն իմ առաջ ալիքներ էր նետում,
Լեռնապէս Ալիքներ... Կոհակները անեղ
Կատաղած, փրփրած. ու վրշտում ու լայիւս...

Պնպճում, որոտում էին զոռ... և ստէպ
Դեի պէս նրանք շանում էին վե՛ր բարձրանալ.
Դէպի վե՛ր Աստուծոյ, Անհունի աջն հզօր
Անհաս Կուրծքը ճեղքե՛լ...

Եւ հեղեղ էր թափւում երկնքից. խօլ հեղեղ
Շանթերի, որ անվերջ զայարւում էին զոռ,
Գայարւում մեծ ալեաց լեռանց մէջ... և անեղ
Հեղեղատը շանթի կտրտում էր թափով,
Փշուր փռի էր անում այն լեռները ալեաց...
Եւ Կայծակը փշրում էր կեանքի երեսին
Կուտակւած ծով Ամպերը...

Եւ կեանքի տագնապոտ այդ ժամին շատ եսեր
Մոլորւած դեղերում էին լոկ Խաւարի—
Անթափանց Խաւարի ճանկերում...
Եւ լոկ Սով... կատարեալ հոգու Սով էր տիրում
Մարդկային սրտերում վշտածոր...
Եւ ճշում էր անե՛ղ ազատ Խիղճը գերւած,
Ու ճշում, ու կանչում... Եւ երկիրը կաշկանդ
Ցաւերի Փոթորիկից և հոգու մեծ Սովից
Զարգանդում էր... զողում...

Եւ եկաւ մութ Կեանքի էութեան ու Մտքի,
Եւ Զարի, և՛ Բարու, և անծալր տանջանաց
Հարցերի մեծ հեղեղը.—եկաւ զոռ թափով
Հեղեղատը հուժկու—հեղեղատն հարցերի...
Ու դարկեց իմ կրծքին. ու փշրեց իմ կրծքի
Սև կապանքը կնճռոտ... Մանրութեան...
Եւ փշրեց անարկու պայթիւնով իմ հոգու

Շղթաները անմիտ... ու իմ կուրծքը բացւեց.
Եւ իմ կուրծքը արիւն ու կրակ հեղեղեց,
Եւ լեզուս էլ բացւեց...

Ու իմ Խօսքը զայրոյթ, և իմ շունչը կարող...
Ես Մաքով եմ ահեղ, թեաւոր...
Այսուհետ ես հողի եմ հպարտ--
Մտեղծող ու կերտող վեհ հողի զօրաւոր...
Եւ սրփիս հրկնածին ակունքից
Յորդ բացւեց մեծ աղբիւրը հպարտ յոյսերի,
Ու վառեց անհուն կիրքը նորող վեհ կեանքի
Ու վառեց ու ալրեց... ես հպարտ եմ, անյաղթ.
Այսուհետ ես հեղեղ եմ հողու, Մեծութեան...
Ես Աստուած եմ, հողի...

1903. Յունւար

Դ Ս Ր Բ Ի Ն

Ոսկան Համբարձումեանին.

Մտքէ կայծակներ շանթող քաջ Դարբին,
Որ կեանք ու հողի զիտեա միշտ կռել.
Ինչո՞ւ, ինձ ասա՛, զործագուլ, անհող
Կռան Զնդանին դադար ես տւել...
Կայծակին նալիր,
Ճակատդ լայն բաց.
Ու կարող ձեռքով
Նեաիր յաղթ հարւած...

* * *

Ու զարկ, զարկ անվերջ երկաթէ Սրաւեր
Աստուած հողիններ կողող կռանով.
Այդ Աստուածաշունչ Զնդանիդ վերայ
Թող ծնունդ առնէ շանթէ Մաքի ծով...
Հպարտ անհունին
Հաւասար եղբայր
Զնդան ու Մուրճով
Հրդեհի՛ր Աշխարհ...

* * *

Տիեզերքը հանուր հոգերու խ Դարբնոց,
 Հոգեծին արդանդ Կռանն ու Զնդան.
 Կալծակը քեզ ձեռք... ու Սիրտդ որոնտ,
 Կռի՛ր ու Կռի՛ր... Կռի՛ր յաւիտեան...
 Արար Աշխարհը—
 Գարշ, զծուծ զանգւած,
 Կրակի՛ր, դարձրո՛ւ
 Մի՛տք, հոգի՛ կռած...

* * *

Լազուրը լազլարթ աստղերով ցիր ցան
 Դարբնոց երաղին թող փառք նւազեն
 Մասիս, Արագած, Լ՛ լեառ, Լ՛ հովիտ
 Քնդնով կրակւած թող հոգի շնչեն...
 Ու կեանքն ու սրտեր,
 Ու Զարն ու Բարին
 Թող ի մի կազմեն
 Հրաշունչ հոգին...

* * *

Դարբին քաջարի, ճակատդ աղմոտ,
 Վերցրո՛ւ յաղթ Կռանն ու զարկ Զնդանին,
 Ու զարկ, զարկ անդուլ, Կռի՛ր ու Կռի՛ր,
 Որ զծուծ Աշխարհն առնէ իր ուղին...

ԵՐԿՆՔԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

Սարգիս Մանուկեանին

Երկնքի՛ խորութիւն...
 Օ՛ առհաս, երազուն բարձունքներ.
 Ա՛խ, ինչո՞ւ անկարող է հոգիս
 Ձեզ պէս խճր, ծեզ պէս բարձր լինել...
 Ի՞մ հոգին էլ ծեզ պէս մըրկո՛տ,
 Մեծ արդանդ է հպարտ Կրքերի...
 Կրքերի, որ անհո՛ւն վեհութեամբ
 Պըլպլում են բալլով աստղերի...
 Երբ մոռոտ աչն ամպերը դաժան,
 Որպէս նենդ ողիններ երկնային
 Մերթ սողում, մերթ լողում են անծայն
 Ձեր մռայլ, ծե՛ր խոհուն ճակատին,—
 Խիտ խմբեր վշտահիւս ամպերի,
 Որպէս չար կենսածին ողիններ,
 Հազած սե՛ւ, ծանր հազուստ ցաւերի,
 Հոգուս մէջ են լողում անարգել...

* * *

Երկնքի խորութիւն...
 Երբ զու ջի՛նչ ես, բիւրե՛ղ ու խոկուն,
 Եւ հսկայ հայելուդ անդունդից
 Երևում է Աստուծո՛ր Անհուն,

Եւ իմաստ է կաթուած քո կրծքից,
 Իմ հոգու ջինջ, զուլալ երկնքի
 Լազուրից շողշողում է Արե—
 Ցնորքի ու փառաց վեհ զեղում.
 Եւ զարուն է հասում սուրբ Սրտիս
 Մեծ Աւեան աղբիւրի աղունքից...

* * *

Երկնքի խորութիւն...
 Անյայտի բարձունքներ խոր ու լալ...
 Իմ հոգին է ձեր վեհ բալանին,
 Նա գիտէ ձեր Դռները բանալ...
 Բարձունքներ... թող անչափ մեծ լինեն
 Յալթ ծովերը հզօր Անյայտի...
 Եւ յաւէտ էլ անօդ, զուր անցնեն
 Երկրածին թռչունները Մտքի.
 Բայց էլի վեհ հոգիս է ազատ.
 Նա գիտէ կուրծքը ձեր թափանցել...
 Օ, գիտէ նա տոկալ, հունչալ
 Եւ Փականքը ձեր պիրկ արծակել...
 Մտքից վե՛ր երկնային բարձունքներ
 Եւ չստան լազուրի խորութիւն.
 Ա՛խ, ինչո՞ւ անկարող է հոգիս
 Ձեզ պէս խոր, ձեզ պէս բարձր լինել...

1904. Մայիս

ՋՈՒԼՅԱՆԵՐ

Երկնքի ծնունդ, Արեւի զաւակ,
 Քաջ աշխատաւոր Մտքի Զուլհակներ,
 Որ հակառ ունէք երկնի պէս աղատ,
 Երկաթէ միան, աժդրհայ ձեռքեր...
 Շանթի պէս անկ
 Ձեռք զարկէք Գործի.
 Ձեր Թափն ու Հանճար
 Նոր կեանք կ'ստեղծի...
 Նման Անհունի արեւ ու աստղին,
 Որ մեծ Աստուծոյ Դազդան է, Դիւան.
 Զուլհակ ու Գլորար, ձեր կուրծքը արնոտ,—
 Դազդան կանգնեցէք հոգու Վեհութեան:

* * *

Ձեր հակառն կնճիւ, ձեր կրծքում աւիւն.
 Գործի վիճակում Բանւոր ու Զուլհակ...
 Զորս կողմը նայէք... կապանքը հեռու,—
 Կեանքի կամարում դեռ կա՞յ արեգակ...
 Եւ բանի աչս վեհ Տիեզերքի բովում
 Շնչում է Դազդան մեծ Աստուածութեան.
 Եւ ամպն ու եթեր, լազուրն ու աստղեր
 Վսեմ, հոգերուս մանած են նորան,

Վշտի սև ամպերն
Ձեր յաղթ սրաերից,
Քրտինքն արնաշիթ
Ձեր լայն ճակատից
Վե՛հ ազատութեան անմե՛ռ շնչի տակ
Երկի՛նք կը թռնեն, յաղթանակ կ'երդեն...
Դադգահին զարկէք Բանուր ու Ձուլհակ,
Ալիքներ Գործի թող կեանքը զրկեն...

* * *

Հողմերն աշխարհի թող նիւթ կուտակեն,
Եւ մանած մանեն կեանքի անիւներ.
Այդ ողջը ուէք Դադգահի բերան,
Դգէ՛ք ու գործէ՛ք մեզ ազատ օրեր...
Այդ նորոգ կեանքի թերթերն են վսեմ,
Հինւած ¹ Դադգահի վերայ կախարդուն,
Թոխիչն ² ու թոխմահ ², մալանչ ու մանած
Այդ ձեզ են կանչում զէպ Գործը անհուն...
Աշխատաւորներ,
Ձեր յոյսը Արեւ...
Երկունքով ծնէք
Գարուն յարատեւ...

¹ Հինեւել-հեմնեւել. հինեւ խօսքը գործ է ածուում, երբ ուղղում են ասել. հիմքը զցած է, գործքը սկսւած է.

² Թոխիչ կամ թոխմահ, երկունս էլ գործիքներ են, որանցով թակում, ամրացնում են գործքը:

* * *

Գարնան շողքի տակ թող ծիլ արծակեն
Մեր Ազատութի՛ւնն... Աստուծո՛ր Մտքի...
Գործից ու Մտքից հոսէ հեղեղատ,
Գործով են ազատ Սրտերը փառքի...
Դէ՛հ, Գործի զեղում
Յրէ՛ք աչ ու ձախ,
Զարկէ՛ք անդադրում.
«Թո՛ւխս, թա՛խս... թո՛ւխս ու թա՛խս...»

1904. Մայիս

ԱՆՀՈՒՆԻ ԵՐԳԸ

Մանի՛ր, մանի՛ր իմ ձախարակ,
Յաղթ ժամանակ.

Խոժոռ Ոգու մալանչներից

Մանի՛ր օրե՛ր, Կեանք ու Տանջանք.

Կենսակծիկ սե՛ւ դարերից

Մանի՛ր Անցեալն — մ ա հ ա ց ու ց ա կ...

Ականջներդ թոյն եմ ածել,

Դէ՛հ շուտ շարժւի՛ր, որ վի՛շտ մանես...

Անէծքն է Քեզ Աշխարհ բերել,

Որ Յոյսերին պատանք հիւսե՛ս...

Քո Անիւր կայծակաթև.

Ճաղեր ունես — շանթէ Լիսեռ —

Քո Սունակը կեղծիք ու դե,

Ունես հրեղէն Խալթոց, Բեւեռ...

Անդէտ Ոգին Քեզ զեկալար,

Աշխարհը ողջ Քեզ օթեան,

Պտտում ես անհմտ, անճար,

Ծորում Շարժում աիեղերական...

Մանի՛ր, մանի՛ր իմ ձախարակ —

Գոռ ժամանակ,

Մանի՛ր Յաւե՛ր հաստ ու բարակ...

Ժիր են Մարդիկ. Մարով խիզախ

էութիւնս կուգեն գիտնալ,

Կուգեն լինել չոգի անկախ,

Ճշմարտութեան դուռը բանալ:

Որպէս հովտի լացող ուռին,

Իր ճիւղերը վշտից թեքած

Անկարող է շիտկել կրկին,

Այդպէս նոքա ահնջով լցած,

Ունայն Մտքի կամարի տակ,

Անկարող են ինձ բմբռնել,

Մանի՛ր, մանի՛ր իմ ձախարակ,

Վեհ ժամանակ,

Մանի՛ր քուլալ, քուլալ կեանքե՛ր...

Դեռ առաջի կեանքի օրից

Մարդը ուղեց ինձ բմբռնել.

Քեզ նիւթել եմ ես իմ Կրծքից

Մտքի թափին արդելը լինել:

Դու այն օրից անխոնջաբար

Ժիր մանում ես Քո Քուլաներ,

Եւ մանածից մարդկանց համար

Սխալանքի ծորում ծովեր...

Քո հաճոյքից — Դառն օրերից,

Սէ Ստութեան նիւթած ծովում,

Մարդն է լողում իր ծննդից,

Յաւէտ տանջում, յաւէտ խարում...

Մանի՛ր, մանի՛ր իմ ձախարակ,

Գոռ ժամանակ.

Մանի՛ր մալանչ սե՛ւ ու սպիտակ...

Միջուկդ լի դժոխք, արիւն,
 Հողիդ լցրել եմ կոյր Կամքով.
 Քո մանածն են ծմեռ, դարուն,
 Երկինք-Գետին պերճ հիւսւածքով
 Անմտութեան Շունչը Քո մէջ,
 Քեզ տւած է շանթէ Թւեր.
 Դէ՛հ շուտ շարժելի՛ր, մանի՛ր անվերջ —
 Զարն ու Բարին, վշտէ թելեր, —
 Զախորդութեան սե Ամպերից
 Կեանքեր հիւսի՛ր, Շիրիժ նիւթի՛ր.
 Կծիկ արա՛ աչդ Մանածից,
 Իլկիդ վերայ մի՛շտ փաթաթի՛ր...
 Թող Միտքը թող ի ծաղրարժան
 Զուր գալարելի՛, անվերջ տոկա՛յ.
 Նա անգոր է... Ճշմարտութեան
 Լոյսից նորան բաժին չը կայ...
 Կայծակի պէս դու թափ ունես,
 Դէ՛հ շուտ շարժելի՛ր իմ ձախարակ,
 Յաղթ ժամանակ.
 Սնելիքդ Դու լաւ դիտես...
 Մանի՛ր կեղծի՛ք հաստ ու բարակ...

Թշւա՛ Մարդիկ, խղճո՛ւկ Սրտե՛ր,
 Որ անու՛մ են Ստութեան մէջ...
 Նոցա դիւթում են Յնորքներ,
 Պերճ Երազի դաշտեր անվերջ...
 Թաղաւորներ ունայն կեանքի,
 Խաբւած անմիտ և խուսափուկ
 Երկրի Փառքով, դեռ մերթապի

Կռիւներ են մղում անձուկ...
 Սհեղ Կուի դաշտերն արիւն,
 Վրէ՛ժ ու դատ են մրմնջում...
 Որդեկորոյս Մայրերն անտուն
 Արցունքի ծով են հեղեղում...
 Եւ ի՞նչ... զճուժ Գանձն ու Պարծանք,
 Ազատութիւնն ու Գերութիւն,
 Անուրջ ու իղձ և զարդ, պատրանք,
 Կայծակաշունչ Թափովդ անհուն
 Կործանում ես, մէկէն փշրո՛ւմ, —
 Եւ ողջն աճիւն, մոխի՛ր դարձնում...
 Մանի՛ր, մանի՛ր իմ ձախարակ,
 Գոռ ժամանակ.
 Լիսեռներդ պտտի՛ր.
 Մանի՛ր դժոխք, մա՛հ ու կրա՛կ,
 Մարդոց Սրտի՛ն փաթաթի՛ր...

1903. Նոյեմբեր

ԳՁՐԱՐԻ ԵՐԳԸ

Հոփսսիմէին

Դեռ մեր կեանքը չունի Արեգակ,
Մեր հովտում քարացած է Խաւար.
Բայց մեր Սիրտը տոկուն համարձակ,
Մեզ նոր կեանք կստեղծի մեր հանձար:
Որպէս Մէզը կենդանի, ծովացած
Վաղորդեան լուս ու մութ ժամերին,
Որ խոժոռ, համբօրէ՛ն զէզ զիզւած
Ծանրանում է լերան ուսերին.
Այգպէս Բուրդը անգիզ, խառնիխուռ,
Որ ծնունդ է կենաց Յորձանքի,
Կուտակւած է մեր գէմ մունջ ու լուռ,
Պէտք է Գործ ու Ձեռքի, ու Մտքի...
Ահա սուրբ մեր Չաքին ¹, մեր Անեղ. ²
Դէ՛հ զգենք առյաւէտ յաղթաբար,
Բը՛զզ ու զը՛զզ... զըզզ ա զըզզ... Հա՛խ ու Հե՛խ...
Մինչ մեզի լոյս Արե՛ւ ծագէ վառ...

¹ Չաքի—երկաթէ գնդաձայր գործիք, որով գլրարը գլելիս զարկում է գլոյ լարին:

² Անեղ—այն կիսաշրջան գործիքն է, որի վրայ ամրացրած է լինում գիզ անոց լարը:

* *

Մեր Կնճիռն է, Կնճի՛ւր Մտքի,
Մեր ճակտին աժդհայ լերան պէս.
Մեր վեհ Գործն է արգանդը Փառքի,
Որ հոծ Կեանք է զգում փրփրապէզ:
Քաշ րնկե՛ր, ա՛խ, նայիր զէպ հեռուն,
Տե՛ս, ինչպէ՛ս մութ կեանքի անդունդից
Ալիքներ են զալիս մորնչուն,
Կատաղած շան նման փրփրալից.
Եւ ինչպէս Կոհակները դաժան
Ուսերին դրած Բուրդ են բերում,
Գղելու Անեղով վհու՛թեան.
Չաքին ա՛ռ ու զգէ՛նք անդադրում...

* * *

Շատ վաղուց, դեռ հզօր ժամանակ,
Որպէս բոյս, Աստծոյ Պարտիզում,—
Որ Տիեզերքն է անհուն, անյատակ,—
Նոր-նոր ծիլ էր զցում, արձակում.
Ալիքները աչգ զիժ այն օրից
Անգիզ Բուրդ են կրում անսպառ.
Սրտի մութ է անյազ Չօրերից,
Բուրդ ախտո՛ւտ, չը զտւած ու խաւար...
Կենսածին այս Բրդում միածն
Խճեւած են ու Չարն ու Բարին,
Ճշմարիտը, Կեղծիք, Սուտը սե
Եւ բի՛ւր բի՛ւր զարշ Ախտե՛ր մթածին...

Բայց մեր Ձեռքը ազատ, քաջ ընկեր,
Մեր Անեղը կայծակ երկնացու-
Մեր Չաքին է հոգին անվեհեր,
Զարկ, զաւե՛նք, զգե՛նք ԲՆԵՐԴԸ խոժոռ...

* * *

Եթէ Բուրդը այս մութ, զգւելիք
Իր մէջ Ծէրք ¹, լոյս Արե՛ւ էլ ունի.
Թէ փառաց մեծ Գարձն կայ զալիք,
Այդ Անեղ ու Չաքին կը ծնի...
Եւ քանի երկնքում շողշողան
Ճշմարտի վեհ աչերը—աստղեր,
Եւ ծովում ալիքները դաժան
Միշտ ոռնան, կրժոռեն մութ ժայռեր.
Թող անդուլ կայծկտայ յաղթ Անեղ.
Ու Չաքին էլ շանթէ վեհ հարւած,
Դէ՛հ, զգե՛նք Բրդի դէզը ահեղ,
Գզւելու է այս Բուրդը ծնւած...

* * *

Մենք գիտենք. Մեծ Աշխարհը արար
Վեհ Գրոց է ազատ ու համայն.
Ժամանակն է վսե՛մ, դռն Գրար,
Որ գզում է անյա՛գ, անսահման...
Նա գզում է, ջոկում իրարից
Վսե՛մ Ծէրքը, խաւար զարշ Օռւանք ²...

¹ Ծէրք—զտւած, գզւած մարդը բուրդ:

² Օռւանք, բրդի անպէտք մասը, որը գզելով դուրս
են բերում:

Եւ Անհունը, Աստած իր Գահից
Մեծ Գործին այդ տալիս է օրհնանք...
Դէ՛հ, զգե՛նք Բուրդը մութ, լեռնացած,
Եւ զիգե՛նք Ծէրքը ջոկ, Օռւանք ջոկ.
Զարկ ընկեր, Աշխարհում չենք ծնւած,
Որ սողանք միշտ անգործ ու անհոգ...
Թող մեր Գործն հոգեբուխ, աւիւնոտ
Մեր Սրտում կազմէ նոր լոյս Կամար.
Որ զգե՛նք, Արեգակը շողոտ
Մեր հովտում կը փայլէ յուսովա՛նք...

1904. Յուլիս

ԿԼԷՅՁՈՒ ԵՐԳԵՐԻՑ

Հայրիկիս

Է՛յ ընկեր, Արեգակը վսեմ,
 Իր զլուխը հանեց խոր քնից.
 Եւ չորս դին ամեն ինչ ջերմաշերմ
 Նա շուրջ ժպիտով յուսալից:
 Եւ Մշուշը կնճռոտ ու խաւար,
 Տեսնելով ազատ Շողն երկնաւոր,
 Հեռանում է, ահա՛, սողիսող,
 Քաշւելով Արեւից փառաւոր:

Ընկե՛ր, բա՛ւ է, որքան մոռացւած,
 Մենք դադար առանք սուրբ մեր Գործից.
 Բե՛ր, սարգենք մեր Դադդահր օրհնւած,
 Սուրբ Դադգան, որ ծնունդ է երկնից:
 Մեր ողջ կեանքը ե՛կ տանք այս Գործին,
 Մենք սրբենք առյաւէտ Ամաններ.
 Մենք ունենք վեհ Կլէկ ¹ փառածին,
 Որ մաքրում է հոգի ու Սրաւեր...

¹ Կլէկ—մետաղ է, որով ամանները սրբելուց յետոյ, վերսրբում են, փայլեցնում:

Ինչպէս յաղթ ալիքները յուշացուշտ.
 Ծովի խոր անդունդից անարգել
 Կեղտ ու Աղբ են քշում դէպի ափ
 Եւ ցայսօր անբաւ Աղբ են դիզել.
 Այդպէս էլ, բարկաճալթ այս Կեանքի
 Մութ Յորձանքը Ախտեր է կրում.
 Եւ այդ ողջը խղճուկ ու թշւառ
 Մարդերի Սիրտ-հոգումն է դիզում:

Կեղտ ու Աղբ Աշխարհի սկզբից
 Հա՛ դիզւել, հա՛ կիտւել են Սրտում.
 Եւ Արեւը յոյսի՝ ժանտ ախտից
 Մեղի լոյս չի՛ տալիս, չի՛ սփռում...
 Պէտք է Գործ և Կլէկ սրբարար,
 Որ Սրտից այդ Ախտերը հանել.
 Պէտք է Ձեռք, և՛ Մկան, և՛ հանճար,
 Որ Կեանքի մեծ Գարունը հիւսել...

Եւ եթէ երկնքում այն լազուր
 Կայ վսեմ Գործերին հատուցում,
 Օ՛, անհոգ կայ, ընկե՛ր, մենք մի օր
 Տեսնելու ենք Գարունն անտրտում...
 Դէ՛հ, ընկեր, մի՛ քնիր և տոկուն
 Ձեռքդ զարկ վեհ Գործի Դադդահին,
 Շատ Անօթ կայ մեր դէմ սրբւելիք,
 Որ կարօտ է մեր յաղթ հանճարին...

Տե՛ս, այս Սիրար մի օր լուսեղէն
 Ճառագայթ էր սփռում աշ ու ծախ.
 Նա մեզի Վեհութեան բարձունքէն

Շողշողում ու կոչում էր յանախ...
 Բայց այսօր... այսօր ժանտ Ախտերից
 Ախբահիւս Վերարկու է հագած.
 Գարշն ու Սուտը, Կեղծիք մթալից
 Նորա մէջ կայուն Բուն են դրած...
 Այս Ամանը, տե՛ս, սե՛ն է, դժխեմ.
 Օ՛, մանկութեան յիշում եմ դորան.
 Վեհ հոգի՛, վեհ Անօթ էր վսե՛մ.
 Նա բաղձանք էր մեզի Սրբութեան:
 Տե՛ս, ինչպէ՛ս Նորա մէջ այլանդակ
 Գարշ Որդեր սողսողում են դէս դէն...
 Նայիր, Կանթն է կոտրած... Կողը ծակ...
 Այսուհետ նա անպէ՛տք է արդէն...

Օ՛, եթէ վեհ Կլէկ չը լինի,
 Կը փտեն Կեղտի մէջ Ամաններ,
 Որ ծնունդ են Լոյսի՛, Արեւի՛.
 Դէ՛հ քսիր, դէ՛հ կոկիր վեհ Սրտեր...
 Մի դադրիր. շուտ արա՛, հա՛ սրբիր.
 Առ Փռչին, առ Անծող շաղաղած,
 Հա՛ քսիր, հա՛ կոկիր Ամաններ,
 Որ կեանքում Սիրտ, հոգի են կոչւած...

1904. Յուլիս

ՏԱՐՈՐԻՆԱԿ ՄԱՐԴԸ

Ասա՛ դու ինձ, ասա՛ այ՛ մարդ տարօրինակ,
 Այս Աշխարհում, մեծ Աշխարհում ամենէն շատ
 Ի՞նչն ես սիրում, ի՞նչն ես պաշտում...
 Մտերմութի՞ւնը անձկալի ու սիրառատ...
 Թե՛ ծնողաց դուժը վսեմ այն երկնածին,
 Թե՛ վեհութիւնը «մերձաւոր» դիւթիչ անւան...

— Մտերմութի՞ւն... Այո՛, ունեմ, զիտեմ սիրել.
 Սիրտս կը տամ Մտերմութեան վեհ բարձունքին:
 Ես դեռ մանկութ Մտերմացայ սրտանւէր
 Միշտ հարազատ, հաւատարիմ ընկերներին.
 Մայրս հազիւ զատեց զթոռ ինձ իր կրծքէն,
 Հազիւ լսեց ջինջ թոթովանքն իմ առաջին,
 Հէնց այն օրից ընկերացայ ես Վշտի հետ,
 Եւ Կեանք մտանք Մենք միատեղ ու անմեկին...
 Մի քիչ յետոյ Յուրան ու Չարիք,
 Քիչ էլ յետոյ Սովն ու Կարիք.
 Եւ միշտ մի տեղ, միշտ միասին
 Ո՛ւխտ կապեցինք, ո՛ւխտ սրտադին,

Մտերմումթիւնն այս անբերկրանք
Անխախտ պահել երկնքի տակ...
Եւ մենք այնքան, այնքան իրար
Նւիրւեցանք չերմ ու սրտանց,
Որ երկնի տակ, կեանքում իսպառ
Էլ մեզի պէս չկայ սիրուն
Անդաւանան վեհ Միութիւն...

Իսկ ծնողներ... Դեռ այն օրից երբ իմ մատաղ
Միտքը թափոտ դիակէր հեռու, հեռու ճախրել
Եւ մանկական բիւրեղ Սրտիս վեհ բնարին
Երազանքի ծաղկադաշտեր մերթ յօրինել...
Ծնողներիս սրտանւէր
Ես ճամբեցի Մեծ Անյայտի Աշխարհի մութ...
Այնուհետեւ անտուն, անմէր
Ես Որդեգիր առմիշտ դարձայ այն բարեգութ՝
Անյուսութեան երկրէն եկած չար հողմերին...
Դոցանից զատ, լաւ իմացի՝
Այլ մերձաւոր գեռ չեմ տեսել,
Ոչ էլ գիտեմ, օ, քաւ լիցի,
Չեմ էլ կարող այդ ըմբռնել...—

Բացք ինձ աստ, ով անսովոր խտասիրտ Մարդ,
Այս կախարդիչ հրաշագեղ երկնքի տակ
Դու չե՞ս գտնում որեւէ բան Սիրուդ արժան...
Ի՞նչ ես ասում Գարուններին՝—
Այն զարդ, փարթամ, խենթացնող Գեղեցկութեան,
Ի՞նչ ես ասում վեհատեսիլ՝
Աստուածների շողք ու ժպիտ Արշալօյսին...

Օ, միթէ քո Սիրտը, հոգին չի հմայում
Այն չի՞նչ ու լալ խորութիւնը անուրջալին,
Ուր վառ Աստղեր—երկնից Աչեր
Դիտեն կանչել հեռուն... հեռուն այն անտրտում...

— Պերճ Գարուններ, օ, քաւ լիցի.
Անլոյս կեանքիս անփայլ ուղին
Միշտ օտար է եղել փարթամ ու կախարդուն
Գարունների զարդ ժպիտին...
Ես չգիտեմ այլ Գարուններ,
Բացի իմ վեհ Դիտակցութեան, վեհ ճենչանքիս) +
Միշտ արեւող, միշտ հմայուն Գարուններից...
Օ՛, քաւ լիցի... Ես արտաքին այս Աշխարհում
Դեռ գրաւիչ բան չը գիտեմ.
Ձի Բնութեան Պերանքը ողջ—Գեղեցկութիւն
Անդրադարձումն է իմ Մտքի անհաս Շէնքին.
Եւ ի՞նչ է նա... թէ ոչ բիւրեղ մի հայելի...
Օ՛, ես գիտեմ այդ հայելում անդրադարձող
Այն Շէնքը կերտ սիրելի, պաշտելի,
Որ իմ հոգում—իմ մեծ հոգումն է դադանացած...
Նա է իմ վեհ Սէրն ու Երկի՜նք, Ա՛րեւ, Գարուն
Եւ էլ Աստուած...

ՄԻՏՔՆ ՈՒ ԿԱՊԱՆՔԸ

Ժայռերը կնճռոտ, նոթերը կիտած,
Հպարտ ու մենակ կանգնած են ահա.
Հսկայ փէշերը չորս դին տարածած
Յամառ չեղնութեամբ նայում են նորա
Աշխարհի Կուռքին, կեանքի Տաճարին,
Ամպաչու զխով Երկինքը հասած
Ծաղրանք են նետում Հանճարի Մտքին...

Նոցա աժդրհայ փէշերի տակից
Երկունքի ցաւով Աղբիւրն է խօսում...
Կաշկանդող լերան բռնի ճանկերից
Ջրերն աղմկող հեռու են հոսում...
Փրփուրը բերնին վէտերը կայտա...
Յուզում են... վրշշում, ցայտում դէպի վե՛ր...
Կապանքը կրծող Յորձանքը յամառ
Հնչում է ազատ Տանջանք ու Երգե՛ր...

* * *

Հեռու ծովերից, Անհունի զրկից
Սե՛սե՛ ու խոժո՛ռ գալիս են ամպե՛ր.
Ձգւած են շարքով իրար յետեից,

Ասես թշնամու անհամար զնդեր...
Ժայռերը դաժան, ուսերը մեկնած,
Զայրոյթը իրենց երկնահաս ճակտին,
Կանչում են զօրքը, կանչում զրկաբաց.—

— Հէ՛յ-հո՛յ սե՛ ամպե՛ր, տարազիւր զօրքեր,
Որ մի՛շտ, անկայան շրջում էք մոլոր.
Ո՞ւր է ձեր տէրը. ինչո՞ւ է թողել
Ձեզ օտար երկրում պանդո՛ւխտ ու սղո՛ւր...
Եկէ՛ք գունդիգունդ. ուսերը մեր լայն,
Որ կո՛յս են յաւերժ, անմատո՛յց, ազա՛տ,
Ձեզ վե՛հ, քաջարի կը տան օթե՛ան—
Միշտ գա՛լ, ծրարե՛լ մեր դէմքն ու ճակատ...—

Մե՛լթ... Թանձր խաւար. դէշերը մռայլ
Իր գիրկը առաւ Աշխարհը լռին.
Զօրքերը Ամպի դանդաղ, յաղթաբա՛ր
Բռնակ զարկեցին լերան ուսերին:
Եւ երբ ոխերիմ ու մռայլատես
Թշնամիների այն խուլ բանակում
Շանթի ոլորտներ, օձերը ասես,
Յուլացին... պայթեց զզորդ-որոտում,
Ժայռերը հպարտ, յօնքերը կիտած—
Զայրոյթի ծովեր դժխեմ աչերին—
Կճո՛ւ, նենգօրէն նայելով դէպ ցած,
Ընկան... ծանրացան Աղբիւրի զլխին...
— Հը՛. գերւած ես այժմ... ու շղթայակապ
Ձգում ես տուգե՛կ քո Մահն ու Գրող...
Խո՛մ տեսա՛ր հսկայ մեր Կորովն ու Թափ.

Դէ՛հ, մեռի՛ր. քեզ մահ, Աղբիւր աղմկող...
Հա, հա, հա... Թշւառ, մեր փէշերի տակ
Առմիշտ ցամաքի՛ր—գոչեցին ժայռեր.
Թող տեղդ մնայ շիրիմ... աւերակ...
Գո բախտը մենք ենք—Թնդացին լեռներ...

— «Իմ Շիթն ու Յորձանք անդուլ կը հնչեն.—
Լեռների տակից մըմնջաց Աղբիւր.

— Կապանքները այս երազ են, կանցնեն,—
Մէկէն գոչեցին կոհակները բիւր...

Յաղթական երգով Աղբիւրը բիւրեց
Ասանց, գալարեց մարգարտի Շիթեր.
Ցնծուցն ու մըմունչ, արցունք լուսազեկ
Եւ կոյս կարօտով լեցուն վեհ երգեր
Արագ սահեցին դէպ հեռուն... հեռուն...
Ուր շողում էր միշտ լոյս Ազատութիւն...

* * *

Դարե՛ր, բիւր Դարեր որպէս Կարաւան
Այն օրից ՚ի վեր եկել են, անցել...
Իսկ Միտքը այսօր—չինչ Աղբիւրը այն,
Որ կոյր Տանջանքի սրտումն է սնել,
Անտի ու Յաւերժ Տիեզերքի համար
Դարձել է անմահ ոգեշունչ Արեւ...
Եւ վեհ ժպիտը նորա կենարար
Լուսաւորում է օրերը մեր սեւ...
— Ասա, Աշխարհի կենսատու Աղբիւր.
Ո՛ւր են քեզ խեղդող Կապանքներն ունայն...
— Հսկայ թևի տակ Դարերի հանուր
Մեւսած են նորա... լուծւած են... չը կան...

Զ Ա Ն Գ Ը

Մենք անցուր ենք, կեանքն էլ անցւոր,
Ու զնում ենք հեռո՛ւ, հեռո՛ւ...

«Դրձմ-դձմձմ... դրձմ-դձմձմ...

«Զրննդ-զրնննդ... զրննդ-զրնննդ...

Կոյս Անյայտի յաւերժական արդանդներին
Հնչող Զանգի խենթացնող հոծ արծազանք՝
Տխուր ժամին անփալ կեանքի,
Ցնցեց լարերն իմ սուրբ Սրտի...
Եւ հառադայթը վեհ Հոգուս հախրեց նորից
Ցնորքների աստեղանի՛շ կամարի տակ...

Եւ տեսնում եմ. ահա Կերտող Աստծու պէս
Կալծակածին թե՛ ու թափ՛վ նաւը Մտքի,—
Որ ճեղքում է մռայլատես
Ալիքները մեծ եթերքի...
Որ քաջարի՛ եւ վառիվառ նետում է վեր
Եւ Անհունի անմայրածիր ոլորտներում
Շանթում է յորդ կայծէ հեռքեր...

«Դրձմ-դձմձմ... զրննդ-զրնննդ...

«Դրձմ-դձմձմ... զրննդ-զրնննդ...

Ու նաւում է, Միտքը թևում
Դէպ Յաւերժի կանչն ու կրօնի...

* * *

Ահա հեռուն. զարնանատես պանդուխտ Նաւակ, *
Գեղեցկութեան Յաւերժահարսն է Նաւափար...
Արշալոյսի բոլն ու փայլակ
Նորան շոյում են յուսափառ...
Եւ լուսեղէն նաւակի մէջ այն կախարդուն
Միշտ երգում են Երկնածարաւ վեհ Երգիչներ,
Եւ լողում է նաւը փայլուն
Դէպ Զանգը վեհ, կանչը-անչափ...
«Դրժմ-դժմ... զրճնդ-զրճնդ...»
«Դրժմ-դժմ... զրճնդ-զրճնդ...»

Ես զգում եմ. ահա Բիւր բիւր Նաւեր խոհուն
Ժամանակի այս անկուպար ալեաց միջին
Սահում են վեր, տենչում հեռուն—
Դէպ Անյայտի ափը վերին...
Ահա կեանքը Աղատութեան ու Գերութեան...
Ահա անդուսպ փայլքների ծովը սուղւած
Այս աշխարհի Տէրերն ունայն...
Ահա բանտում հալմա՜շ եղած
Խղճմամբեր... հարձուտ, աղքատ... Սրտեր թշւառ,
Որ քինայոյզ Զախորդութեան ամպերի մէջ—
Խոր երկունքի կրճքում յամառ.
Հեղեղում են արիւն անվերջ...
Եւ այս ողջը—համայնական Մեծն Արշաւանք—
Զանգի կանչովն է կախարդւում... վեհ-վեհ նետ-
ւում...

* Գեղարեւոտը

Զրճնդ-զրճնդ... զրճնդ-զրճնդ...
Դրժմ-դժմ... զրժմ-դժմ...
Երկնածար Յաւերժութեան Կոյս Բարձունքի—
Անհունի Զանգն է որոտում. «զրժմ-դժմ...»
զրճնդ-զրճնդ...»
Որ խորհուրդն է Մեծ Տիեզերքի, վեհ հիւսւածքի...
Նա է յուզում, նա է կանչում Սրտերն ու Կեանք...
Եւ զալիս է կանչը անհուն.
Որոտում է ու զրճնդ-զրճնդում...
Ու Աշխարհը, չորս զին, հեռուն
Յաղթ Արձագանքն է կախարդում...

1905. Յունւար

* * *

Կայծակը ինձ նետ,
Անհունը հոգիս.
Աստղերը պսակ
Խորխա հակառիս,
Կեանքիս կապանքը
Փշրե՛մ ու երթա՛մ,
Հոգին էլ ինձ թե՛,
Հեռու սլանամ...

Իմ Երզն է Ղօղանջ՝
Անհունին յստակ.
Աստուած լինելու
Յնորքս անյագ,
Մանրութեան փոշին
Ինձանից ցրե՛մ,
Փառքի դաշտերում
Մեծ կուռք որոնե՛մ...

1903. Գեկտեմբեր

Ա. Ջ. Ա. Տ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն

(Մ. Ի.-ի)

Այն շղարշ ամպերի ծովերից
Ես հով-գով եմ փնջում.
Մրմնջուն ալիքի լազուրից
Շիթ ու շող եմ կորցում,
Որ շնչեմ սիրակէզ ալ-վարդին,
Եւ հնչեմ Եղեմի մեղեդին...

* * *

Երբ թառամ դաշտ, արօտն է դժխեմ,
Եւ հովիտն է սիրոյ հեծեծում.
Արևի ցոլք ու շողքը վսեմ
Այս Երկրին եմ բերում.—
Ուր ծաղկում է Գարուն կախարդուն,
Ուր վառւում են Յոյսերը անհուն...

* * *

Երբ լուսնակը թախծո՞ւ ու խոկո՞ւն
Յնորքի մէջ սուղամ...

Միշտ մաղում է դալձուկ կուսուլթիւն....
Եւ ալիքը յուզւած
Շշնջում և յորձանք է տալիս.—
Այդ անյագ իմ կարօտն են լալիս...

* * *

Եւ հեռուն, ժայռերի կատարին,
Ու ծովում լազուրի,
Ուր արծիւն է հախրում երկնածին.
Այն իմ թափն է կարի,
Որ թեւք է տալիս միշտ նրան՝
Սաւառնել յաղթ, հպարտ ու միանջ...

* * *

Երբ ամպերն են կնճռոտ, խղճեցուն
Եւ նոցա ցանցի մէջ
Կաշկանդւած են Որոտ, Դղրդիւն
Եւ Կայծակը անշէջ
Բռնկւում է յանկարծ յաղթարաւ.—
Իմ կարօտն է շանթում նա յամառ...

* * *

Երկնքի խորութեան անդունդում.
Երբ աստղերը—աչեր
Ճշմարտի՝ պլպլում են, շողում
Կուսուլթեան անուրջներ.
—Ե՛ս եմ այն Բովանդակ, երազուն.
Այնտեղ ե՛ս եմ շնչում Վեհութիւն...

* * *

Այն իմ Շողքն է, ժպիտն հարազատ՝
Սրշալոյսը փնջել.
Այն իմ Յոյսն է, իմ Լոյսը ազատ
Վեհ Լուսաստղը Գգել.—
Ես Մտքի թաղուհին եմ անմահ,
Ու Արեւ, ու Եթերն են ինձ դահ...

* * *

Ես ծնւում, ես սնւում եմ Կեանքի
Ու Մտքի Երկունքում.
Գեղ Գարունը Լոյսի ու Փառքի
Ինձ օրհնեցէ է հնչում...
Ես սիրում եմ ազատ հեռունէր,
Անսահման երազել զէպի վե՛ր...

1904. Հոկտեմբեր

*
* *

էս կեանքը սե բանա, էս կեանքը մութ խուց,
Ազատը Սիրող ի՞նչ ես որոնում.
Ձեռքերիդ Շղթայ, կեանքիդ ծանր լուծ,
Հերիք չէ՞ այդքան սգում ես, հեծծում...

Ա՛հ, Ազատութիւն, Սրտի արեգակ,
Մտքից էլ ես վեր. եթերը քեզ զա՛հ.
Տենչ ու բոց սրտիս պապակն ես անյադ,
Վեհ Ազատութիւն անհուն ու անմահ...

Զարնեմ նեղ ու մութ կեանքիս կապանքին,
Փշրե՛մ ու ազատ թափով սլանամ...
Արծւի պէս վե՛հ, ամպերի փէշին,
Քե՛զ, Ազատութիւն, զրկե՛մ ու երթամ...

1901. Գեկտեմբեր

*
* *

Վաղամեռ ընկերոջս՝ Անուշաւանի յիշատակին

Ամպածրար սէզ ժայռերի կատարներին
Արծիւն է վե՛հ, որ Գահ ունի.
Սև ամպերից էլ վե՛ր, վերե՛ւ, Աստծու մօտին,
Արծիւն է յաղթ, որ կը ճախրի՛...

Այս անարև դառն օրերուն անդթութեան
Գա՛րշ, արնախում կապանքից վեր,
Անհունի չափ սուրբ Միտքն է այն Ազատութեան,
Որ թւում է Արծւի պէս անվեհեր...

Ես գիտեմ—թող Անյուսութեան կրճէից եկած
Հողմերը չար, կենսակործան
Մեր վեհ Յոյսի պարտիզի մէջ ծիլ արծակած
Տենչանքների վարդն ու շուշան
Քշեն, ցրեն դէպ Անցեալի մշուշը սև,
Բայց էլի մենք մեր սրտերում
Ունենք անյաղթ ու մշտավառ վսեմ Արև,—
Ազատութեան յօղի ցոլբում...

Եւ քանի զեռ մեր լուսնի տակ լուռ ու խոկուն
Լեռները կան այն երկնահաս,
Որ մեծ Սրտի, մեծ Տենչանքի միշտ երազուն
Աղատ Ոգու գահն են անհաս,
Եւ քանի զեռ Աղատութեան արեամբ ցօղած
Պիտի հեծծեն վերջալուսներ...
Օ, չենք կարող չը հաւատալ, որ յոյստարած
Աղատութեան կը գան օրեր...

1904. Յունիս

* * *

Երնէ՛կ, երնէ՛կ,
Աղատ երազ նինչի ժամին,
Կամ բոց կրակ Մտքի՛ անեղ,
Լինե՛մ, թռնե՛մ մօտդ, անգին,
Կեանքի Արե՛ւ Աղատութիւն,
Փառաց Տաճար, Աղատութի՛ւն...

Երնէ՛կ, երնէ՛կ,
Ոսկի անուրջ լայն ճակատիս,
Երկնից տենչանք սրտիս ծովում՝
Ես իղձ լինեմ, ցնորք լինեմ,
Սուրմ, ճախրե՛մ մօտդ, Գարուն:
Մասսից էլ վե՛հ, Աղատութի՛ւն...

1904. Յունուար

ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐԻՑ

Ինձ մի՛ յուզէ՛ք,
Ու մի՛ ասէ՛ք՝
Սիրոյ ծարաւ, անյագ երգիչ...
Օ՛, ես գիտեմ, ես երգել եմ
Վարդը բուսած զեղ վայրերում.
Օ՛, ես գիտեմ, ես տեսել եմ
Սիրոյ տենդը կոյս աչերում...

Ինձ մի՛ յուզէ՛ք,
Ու մի՛ ասէ՛ք՝
Մեղուսպ Սիրոյ խանդին կարօտ.
Ես Սէր ունեմ. այդ է սգում
Դալար հովտի լացող ուռին.
Ես սիրել եմ, այդ են պատմում
Վեհ աստղերը մուշշ զիշերին...

1904. Յունիս

* * *

Սո ր. Նազան ին

Բո՛ւք ու Բորան... Ձմրան զիշեր.
Ո՛ւֆ... Երկաթէ Սառնամանիք—
Որպէս վիշապ դռ գազաններ,
Բերները բաց, փրփրաժանիք
Մռնչո՛ւմ են, հա՛ մըմըռո՛ւմ,
Սրար Աշխարհ ահաբեկում...

Ո՞ւր է, չը կան Արեւ, Գարուն,
Ո՞ւր է, չը կան Բլբուլն ու Վարդ.
Վշտի՛ աշխարհ... Վիշտն է անհուն,
Է՛լ վա՛խ, Կեանքը՝ ցո՛ւրտ է, անզարդ...

Տե՛ս, քամին է, քամին վայրագ
Դռներ բաղխում, զարկում Սրտին.
Քամին է խօլ թռչում արագ
Յոգնած ու թեան կնիք շրթին...
Ի՞նչ է կորցրել... Ի՞նչ է ուզում.—
Երգը թախծոտ ի՞նչ է խօսում...
Նա վըշվըշո՛ւմ... տաղաճկ լալիս,
Խորտակ սրտիս ծախն է տալիս.

Ձայն է տալիս...
Գարնան Յուշէր, Սէր ու Խնդում,
Յնորքների ոսկի Կամար.
Դալուկ Մահու ցուրտ մահիճում
Է յ վէժ քնէք, գգէք իրար...
Զմրան շնչով այս մութ գիշեր
Նինչ եմ հիւսում ես ձեզ համար...
Նա վրշովըշըմ, տաղտոկ լալիս,
Աւեր սրտի՛ս ձայն է տալիս...

1904. Դեկտեմբեր

ԵՐԳՍ ՈՒ ՀՈԳԻՍ

Արնակարկաչ Կեանքի հովտից ծով պսակով
Անյուսութեան դանդաղ ու քարշ Ամպերն ելան...
Գերեզմանուղ նի՛նչ Լուսթեան կամարներից
Անուրջ ու Իզժ հրեղէն թևով դողդոջ առան...

Մանուկ Սրտին Սէր աւետող վերջալույսին,
Երբ յուսաբեր ու կենսատու վսեմ Ոգու
Ըստինքը ջերմ իմ շրթերից էլ հեռացաւ,
Անսէր Հոգուս անարեգակ ծով երկնքից՝
Կեանքիս Չահէ՛ր, երազ Աստղէ՛ր
Կայծակային Վշտի թափից
Մէկի՛կ, մէկի՛կ ընկան... կորան...

Ո՛ւր է, աւանդ,
Գարնանաշունչ Տենչանքներիս
Այն յաղթական Արևը վառ...
Ո՛ւր է, աւանդ,
Վեհատեսիլ Աստուածների
Երազանքս արշալոյսուղ.
Թռիչքն Հոգուս հպարտ... յամառ...
Զր կան... չր կան...

Եւ իմ հողին, որ Մեծ Յոյսի
Արեգակազ Երկինքն էր լայն,
Նման է սին ու փուլ եկած,
Հիմքը խախտւաւ սեւաւոր տան...

Հեղեղապէս Կեանքի դաժան Մանրութեան տակ
Կրքոտ Յոյսերն, հոգուս Սիւները շուտ կոտորան...
Եւ մտացիր, ճաճանչագեղ Պատերն հոգուս,
Որ Մեծ Աւկան, Աստուածութեան
Հզօր ու դե Յնորքներից էին նիւթւած
Փլան... րնկան...

Եւ այդ անշուք Աւերակաց մէջը այսօր,—
Ուր մոնչ ու լոռ վշտատեսիլ գերեզմաններ
Վաղաթառամ Տենչանքների և Բզձերի
Դարձած երկինք բողոք... վրէժ են մրմնջում...
Վհատութեան ու սեւ Մահու
Շատ վրաններ կան տարածւած...

Եւ այն խորտակ Աստուածութեան անեան տակից
Յայտում է յորդ, մահակարկաչ և արնաշիթ
Բիւրեղ Աղբիւր...

Այն արիւնոզ վշտատարած Ակունքներից
Հիւսում եմ ես Երգերը իմ բոլ մարգարիա...
Իմ Երգերն են այն Աղբիւրի մշտակսկիծ
Յայտերը բիւր...

1903. Փետրւար

Յ Ո Յ Ձ Ե Ր

Իմ կոռք... Իմ Աստուած...
Հողիս հրդեհեց քո Գոռ ծարաւից,
Օ, չրկա՛ս, չրկա՛ս... Անդարձ Գարունքիս՝
Արշալոյսի պէս՝ յուսափառ շէմքին
Երբ հոգուս ոսկի յոյսերի ցանցում
Շողշողում էր յաղթ տենչերի Արեւ,
Ես ծունկ չոքեցի բարկ, ծովանման
Կեանքի սեղանի առաջ անխնդում.
Եւ Սիրտս ուխտեց... Կրքոտ իմ հողին
Այն օրից վեհ-վեր.
Դէպ՝ Լոյսը շողանց,
Ու Միտքս թափառ Տիեզերքի ափեր
Ճախրեց շանթած...

* * *

Իմ կոռք... Իմ Աստուած...
Անհունը Գրկող՝ յաղթ կայծակների
Բոցաթոյր ծովում սուրբ ճնունդ առած՝

Թւերը Մաքիս վեհ-վեր տարածե՛մ...
Եւ հեղեղն Հոգուս — Ողու հոծ հեղեղ —
Մեղսոտ այս Կեանքի երեսին ցրեմ...
Եւ Յնորքների հպարտ ալեաց մէջ,
Եւ աստեղանիշ Յոյսերի բիւրեղ
Կամարների տակ ճախրե՛մ ու նաւե՛մ...
Կաշկանդ Սրտերի
Կապանքը փշրե՛մ...
Առաքաստս լայն... Փառքը, Կո՛ւռքը իմ
Յաւէտ որոնե՛մ...

1903. Գեկտեմբեր



Վաղամեռ ընկերոջս — Յովհաննիսի յիշատակին

Օրերն ու Տարիք մէ՛կ մէ՛կ ծիալար,
Որպէս քինալոյզ դժխեմ ջուլհաւնէր,
Որ Յաւերթութեան առաջ յաղթաբար
Մանում են, հիւսում սե Պատանքը մեր,
Գալիս են, սահում... մռայլ ուսերին
Դրած ամպերը խեթ Զախորդութեան.
Բերում են, լցնում խղճո՛ւկ մեր Հոգին
Թոյնով, ախտերով խոժո՛ռ Մթութեան...

Եւ մենք այս Բանտում — Աշխարհի Բանտում —,
Զանձրոյթ ենք ձգում կենաց Ակունքից՝
Եւ մեր սուրբ Հոգին Ազատ է տենչում,
Աղատ ու հեռու Կապանքի հովտից...
Օ՛, սա է ծիթէ վեհ Կեանքը բուրեան,
Կեանք Հոգո՛ւ, Մաքի՛... Սին հիւանդանոց,
Ուր միշտ վխտո՛ւմ են Վէրքեր անդարման,
Մռմոռ ու Շիւ՛ն և յորդ Լաց ու Կոժ...

Եւ բիւր երանի՜, ով գիտէ զգալ
 Յաւերժ Թափառման բերկրանքն անտրտում.
 Եւ կեանքը տաղտուկ միշտ նորա համար
 Եղել է վսեմ անծայր Որոնում...
 Որպէս երկիրը, որ դէի թափով
 Իր խոր Զանձրոյթից փախչում է անյաղ.
 Որ գիշեր, ցերեկ անհանգիստ, խռով
 Նետուում է առաջ խոժո՞ռ ու մենա՞կ,

Շրջել... թող այդպէս ծանծրացած հոգին
 Զգայ ու շոյէ Քաղցրութեան Բարձունք,
 Եւ թոթափէ իւր Թախիծը մթին...
 Թափառել հեռու, դէպ հեռո՞ւ ափունք...
 Եւ Թափառման մէջ հարբել ու կորչել.
 Թող շունչը նորա հնչէ վեհ օրօր.
 Նորա պեաց մէջ յաւէտ մոռացւել.
 Մոռացւել, ծծել Սղատն ու Անդորր...

1904. Սեպտեմբեր

ԱՐՇԱԼՈՅՍԻ ԱՌԱՋ

Վիկտոր Մանէլեանին

...Ժամանակի երկաթ հողմերի
 Անդթութեան տակ
 Հալումաշ եղած ընկեր սիրելի՜,
 Երբ անարեղակ
 Հոգիդ կնճռո՞տ... և դու մենաւոր
 Անընկեր շրջես...
 Եւ շատ էլ Սրտեր փշրող ահաւոր
 Մրրիկներ տեսնես...
 Օ, բնա՛ւ, երբէ՛ք այս վեհ Բնութեան
 Վեհ օրէնքներին
 Դու չըտաս անուն կոյր Անմտութեան...
 Զի մեր սուրբ հոգին
 Երբեմնի ժամին գիտէ ճանաչել
 Կարող Անհունի—
 Անհաս Սրւեստի համայնապատկեր.
 Երբ լուծր կեանքի

Իրնից թաթափած՝ նա վարկենաբար
Աստուածատեսիլ
Հրաշալիքների առաջ մտալար
Կանգնէ՛լ զմայիլ...



Ո՞վ չի հմայւում վեհ Սրշալոյսով
Արեամբ հրդեհւած.
Երազների մայր, Յոյսի վարդերով
Յաւէ՛տ շաղախւած...
Այն Սրշալոյսով, որ հոգիների
Անյայտ Աշխարհէն
Սուրբ ծնունդ առած, դանդաղ Օրերի
Օրրոցի միջէն
Ամեն առաւօտ, ամեն առաւօտ
Շողքով փրկութեան
Յիշեցնում ձեզ հոգիներ մեղսոտ,
Սուրբ Ազատութեան
Արիւնով զնւած Գարունն հեռաւոր,
Որ Աստուծային
Նախածեռնութեան թափով լուսաւոր
Տրւած է Կեանքին...



Ես լաւ գիտեմ, ով անկարեկիցներ,
Այդ նւիրական
Սրշալոյսները, որ մեծ երազներ
Մեզ կը խոստանան,
Անդրադարձումն են մեր հոգու խորքում

Միշտ կամար կապող
Սրշալոյսներին, որ միշտ, անդադրում
Փայլով խենթացնող
Վառ շողշողում են մեր աճիւնացած
Վեհ Տենչանքներուն
Շիրիմների մէջ... Օ՛, արիւնկալած,
Յաւէ՛տ կախարդուն
Սրշալոյսն է յաղթ Աստծոյ ժպիտ՝
Թափնւած մեր հոգում,
Որ իբրեւ երկնից Անուրջի սուրբ շիթ
Շողում է... կոչում...

1904. Մայիս

* * *

Միք. Սվեցնիկեանին

Աստղերի ցանցում, ամպերից էլ վե՛ր,—
Խո՛ր, անուրջային բիւրեղ բարձունքում,
Ուր վեհ ճշմարիտն, Յոյսը, Գութն ու Սէր
Սուրբ Ազատութեան երազ կամարում
Շողում են անհուն,
Շնչում են Գարուն,—

Ես ջնո՛րք ունեմ... ջնորք կաթողին,
Սրնավէժ Կեանքի ափերին փնջած...
Եւ քանի այսպէս Կեանքում տրտմազին
Պիտ իշխեն Բռունցք, Սուտն համատարած,
Երկնքէն ժե՛մ
Ես զա՛տ կ'աղերսեմ...

Ու Միտքս աղա՛տ... Ես էլ լաւ զիտեմ,
Որ Կեանքը այս կերպ չի մնայ խաւար.
Յորձանքը Արեան, Կեղծիքը զժխեմ
Հիւրեր են միայն, կանցնեն աննշմար...
Եւ բիւր երանի՛,
Ով մեծ Մերտ ունի,

Սրտի խորանում Տենչ Աստուածութեան.
Ով Գալիք Գարնան Յուսոյ պարտիզում
Գեղ Վարդեր ունի կենսո՞տ ու բուրե՛ն...
Օ', նա կը տեսնէ այն ջի՛նջ երկնքում
Յաղթ լոյս Գարուն,
Յաղթ Ազատութիւն...

1904. Մայիս

* * *

Մեր Լայն երկնքում բանակ առ բանակ
Դիզած են ամպեր անյոյս Դառնութեան.
Մեր վեհ Սրտերի երգերն ու նւագ
Վշտի յորձանքից իսպառ սեւացան...

Եւ եղեմական Վայրերում փարթամ,
Ուր կեանք էր հոսում Գարնան կարկաչով,
Աճիւնն ու մոխիր անփայլ ու թառամ
Պատել են չորս զին Մահւան համերգով...

Եւ Յաւերժութեան կրճէից միալար
Սահում են Դարեր խոժոճ ու դաժան...
Եւ Շիրիմ դառած մեր Սրտի համար
Ոչ Յոյս կայ, ոչ Սէ՛ր, ոչ էլ Լոյս Գարնան...

1904. Ապրիլ

* * *

Աշխարհի տէրեր.
Կռանք մաքէ, շանթից ահաւոր,
Յաղթ Ձեռս առած, եռ ձեզ եմ զիմում.
Անթէ, անթռիչք, ըղձաղուրկ, մոլոր,
Գճճւծ հոգիներ...

Կապանք սիրելով՝
Անհաղորդ էք Դուք վեհ-վեր Սրտերի
Աստածափայել յաղթ Յնորքներին,
Որ արեւում են յանուն կուռքերի՝
Փառանց բոլլերով...

Նայէ՛ք սրամոլոր.
Գերեղմաններին յատուկ, անփայել,
Գէշ ունայնութեան Մշուշի տակից
Նայէ՛ք դէպի ինձ... Հոգու յուսաբեր
Ես Մուրճն եմ խոժոճ...

Սրտեր տենչկորոյս,
 Հոգեծին Մուրճով, հակառակ Սրէ,
 Սաստում եմ ես ձեզ, սողալ իմացող
 Ստոր զաւակաց... իմ Երգն է սէ, դէ,
 Տենչանքս վեհ... լոյս...

Եւ անհունացած՝
 Կեանքի Սրշալոյս, մտքերի Զեղում
 Իմ հոգի Մուրճով զարնեմ... Կը փշրեմ
 Սրտերը աւեր, որ չեն հանաչում
 Յնորքի Աստուած...

1903. Դեկտեմբեր

* * *

Գիշերն է լռիկ և ջինջ երկնքէն
 Աստղերի ցանցից խորհուրդ է կաթում.
 Եւ շողքը լուսնի—ժպիտ Դալիութեան—
 Լեռներն է ցօղում, հովիտն արծաթում...

Եւ մութ Սրտերի Տենչանքը անփայլ
 Կեանքի Օրրանից եթերը ելած՝
 Մենակ ու մոյր փնտռում է Բաղձանք
 Անմէր Խեղճերին վշտից տապակւած...

Հպարտ Ժալուերի ափունքը մռայլ
 Յուշիկ շշուշով ծեծում են ալիք.
 Եւ այն մեղմ ալեաց մրմունջը վսեմ
 Հնչում է Սրտին օրերը Դալիք...

1903. Ապրիլ

Ն Ա Ի Ա Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Անոյշ քրոջս՝ Խանումին

Նաւահանդիստ...

Վսեմ չոգու չնաշխարհիկ, կախարդուն վա՛յր.

Որքան Գիտես Դու հմայել,

Իդժը հեռո՞ւ, հեռո՞ւ կռչել...

Յաւերժական Երազներիս վեհագութ Մայր...

Հազար ու բիւր Սիրա ու Նաւեր Կեանքի ծովում,

Զախորդութեան հողմերի մէջ՝

Զարկւում են յար, տանջւում անվերջ,

Դէպ փրկարար զարձաժ ափունք, Քեզ են ծայնում...

Քանի՞, քանի՞ միշտ երազուն վեհ Տենչանքներ

Մահ են ծծել՝ քեզի՜ կարօտ...

Քանի՞ Սրտիս նոր Առաւօտ,—

Զը յօրինես Յուսոյ փարթամ ծաղկադաշտեր...

Նաւահանդիստ...

Յուսածնունդ Արեւների սուրբ Օթեան,

Որ Սրտերի վեհ երկնքում

Ազատ Գարուն, Լոյս եւ շողում,

Ա՛հ, հէր ես... կա՛ս... սուրբ Յնորքիս անմահ Կայան...

1904. Սեպտեմբեր

ՄԱՆԿԱՆ ՕՐՕՐՈՑԻ ՄՕՏԻՆ

Այս դառն Աշխարհի դժբախտ օրերի
Անգութ հողմերի առաջ մտալար՝
Կանգնած եմ, մանուկ, օրրոցիդ վերև,
Հոգիս կնձռնու և վշտածրար:

*
*
*

Աստ ինձ, մանուկ,
Գիտե՞ս, որ շողքը յստակ Յնորբի
Իւր վեհ ալեաց հետ աշխարհ քեզ բերեց
Որ կարօտ քաշես ազնւոյ Գարունքի...

*
*
*

Բայց Դառն է Ուղին... յանուն Վեհութեան,
Հեռու և Կոչող Անյայտի համար—
Մենք վիշտ ենք ծծում սպունդի նման,
Մենք շատ ենք անցնում Անգունդներ մռայլ...
Օ, բիւր երանի, անմեղ իմ մանուկ,
Թէ դու գիտենաս, ո՞րքան սեւ ամպեր
Գերեզմանածին անյոյս Տանջանքի,

Կամ ո՞րքան կեղծիք, մրմուռ, սուգ ու լաց,
Ո՞րքան քմահաճանք Կոյր ժամանակի
Կեանքիդ կամարում բանակ առ բանակ
Ակնկալում են քեզի անդատար...

*
*
*

Ախ, քնքուշ մանկիկ, որ այդօրինակ
Հոգի դու ունես բիւրեղ ու զուլալ.
Բայց չե՞ս խուսափիլ երկաթ օրերուն
Սեւ անգթութեան Մռայլ Կապանքից...
Եւ թէպէտ այսպէս Լուսնեակը խոհուն
Երկնքի Գահից միշտ, ամէն գիշեր
Անյուսութիւն է ցօղում մեր Դաշտին,—
Դու ինձ հաւատա՛, սիրուն իմ Մանուկ.
Կապանքի, Արեան այս դժխեմ հովտին
Արշալոյսներ կան...

*
*
*

Եւ նենգ հողմերը ծախորդ օրերի,
Ու ճակատադրի խաղերը դաժան
Կամօւրջ են միայն դէպ այնտեղ... հեռուն,
Ուր մերն է Յոյսը, և Արեւ, և Սէր...
Հաւատա՛, մանուկ, ծախորդ օրերուն
Հետեւելու են վսեմ Բարձունքներ...

1904. Յուլիս

ՅՆՈՐՔ ՈՒ ԹՈՒՉՔ

Աժդրհայ և անպարտ ձախատին շարեշար
Մէջը մէջքի արած չաղթ լեռնացած կնճիռնէր...
Եւ իզիթ Աչերից արնաշիթ, հրախառ
Հեղեղւող Արցունքի բարկաճալթ լալն ծովէր...
Միշտ վկայ են անմեռ... օ, վկայ են հոգի,
Որ գալիք օրերի անթափանց Մէդի մէջ
Կեանքն ունի գաղտնացած վեհ Գարուն փառաւոր...

* * *

Պատերազմ, ծով Արեան... Դիակնէր հեղեղւած...
Թող Տէրերն Աշխարհի շահամոլ Գրպանին
Գերիններ ճանաչեն... Թող անկուշտ, արնախում
Գազաններ հռչակեն... և զԺոխք թող լինի...
Բայց աշնտեղ, ցնորքոտ Անհունի կրծքի տակ
Արշալոյսը Կեանքին մեծ Գարուն է հիւսում...
Մեղ աշնտեղ է տանում Շանթ-Հոգին 'ի շալակ...

* * *

Պատմութիւնը Ողբերգ է արնոտ և ահեղ
Կեանքի ճանապարհին: Ճանապարհն այս անծայր
Մերը չէ... մենք անցնում ենք հեռուն, դէպ աշտեղ,
Ուր անմեռ Աստուծներ Ոգու ծով են ծորում...
Մերը չէ այս ուղին, սա անցւոր է, անփալկ...
Շանթ-Հոգին, որ մեզի 'ի շալակ է տանում,
Ճանաչում է Տաճարը փառաց ըղձափառ...

* * *

Այս ուղին մերը չէ... Մեծ Հոգին թեանի
Մեղ տանում է օտար Աշխարհի դաշտերով...
Եւ Անմեռ, Անկախ թափով կայծակի
Մեր թռիչքը դիտում է անհուն իր Շնչով...
Այս ուղին մերը չէ... Դժոխք ձախատազրի
Սահմանումն է ընկած մեր ուղին... որտեղ ծով
Եւ հեղեղ կայ Արեան, Կրակ է վշտերի...

* * *

Այս ուղին մերը չէ... սա Կամուրջն է փառաց.
Մեր Արեւ, մեր Կուռքեր այն Ափին են, աշտեղ...
Մեր թռիչքն է անհուն, մեր տաճար լոյստարած...
Շանթ Հոգին թեանի կայծակնոտ ու անեղ,
Որ ճախրում է, տանում մեր Արտերն 'ի շալակ,
Այն սուրբ Կիրքն է Կենաց և Հոգու մեծութեան,
Որ վառուել է առմիշտ և վառւում է անյաղ...

* * *

Մեր հոգին է հպարտ...
Նա հեղեղ է Կրքի՝ մեծ, արի՛ ապրելու...
Եւ եթէ Սրտերի ամպածոյ երկնքում՝
Արնացող ճաճանչի գալարուն խուրձերու
Ծովի մէջ արեւում ճենչանք փրկութեան.
Եթէ կայ հոգու շանթ ու Մտքի հեղեղատ.
Կայ և Կիրք գտնելու Բարձունքն Ազատութեան...

* * *

Մեր Սրտերը... այնտեղ կայ երկինք ու երկիր...
Ամէն ինչ, ամէն ինչ... մեր Սրտերը անհուն
Անեղին հայելի են շողոտ, մտացի...
Յաղթ Անմեռը լաղւարթ Լազուրից աստղաւուն
Արեւներ է չանթել... մեր Սրտումը թաղել...
Մրրկնաւ երկնքից շանթ, կայծակը խլած՝
Ըղծերի փաթեթով մեր հոգումն է նետել...

* * *

Այդ Կայծակն է յաղթ Կիրք Արևի՛, Մեծութեան.
Այդ է շանթալար Իրաւունքն ապրելու,
Որ փարթամ ըղծերի ծովի մէջ անսահման
Թեւ ու թափ է տալիս դէպի կոճաք ճախրելու...
Այդ Մրրիկն է հոգու, Սրտերի թաղաւոր,
Որ զայրոյթը շանթէ հակատին պսակած՝
Արիւննէլ է անվերջ ովկեաննէր վշտաւոր...

* * *

Այդ Մրրիկ Իրաւունքն է մեր շունչը անմեռ,
Որ տանում է մեզի դէպ Արև ի շալակ.
Ահեղ Կիրքն է հոգու, որ Մանգաղը Մահու
Բռնած՝ կեանք է հնձում... և ծովեր արիւնում...
Թոյլերին նա ատում է Կրքով դժեղակ.
Իսկ Նոցա, ով անյաղթ է հոգով, թռցնում...
Ու թռում է հեռուն... Դէպի վեր, Արեղակ...

* * *

Այդ Մրրիկ Իրաւունքն է անհաս թագաւոր
Սթղրհայ Սրտերի և Աստուծ ճենչերի.
Այդ հոգին է Յնճը, որ կեանքի Սեւաւոր
Օրրանից Արեան ծով ծորելով... Ազգերի
Գերեզմանը նիւթեց... և ազատ Սրտերին
Թեւանի՛, ի շալակ դէպ Անհունը բերեց...
Այդ վեհ Կուռքն է հոգու ու կեանքի փառածին...
Իրաւունք... Իրաւունք...

1904. Ապրիլ

ԿԵԱՆՔԻ ԱՓԻՆ

Պօղոս Արեւիկանին

Ճակատիս խտացած անձայր Վշտերի
Այս ծով ամպերից բլթեր եմ երգում.
Սրտիս զէգ-զիզւած, որպէս վեհ Տաճար—
Հպարտ Յոյսերից Արեւ եմ հիւսում..
Անյաղթ ճշմարտի գարնան շողերից
Նիւթում եմ Արեւ կեանքի Մեծութեան.
Ով զիտէ ապրել, թող ապրէ միայն...

* * *

Ես շատ եմ ապրել. ես յաղթ եմ ապրել.
Ամպեր են գրկել երկինքը Սրտիս.
Փորձանք, հալածում, մրճւր Գերութեան,
Որպէս թուխ մշուշ, հոգուս անդունդում
Կամար են կապել, կամար Դառնութեան..

* * *

Անգարձ օրերի մի Կոյս առաւօտ
Կայտնա, ժպտերեւ, վառվռուն յոյսով,
Սիրոյ տենչերի Դարունքին կարօտ՝
Ես Կեանքը մտայ երկիւղած Սրտով...

Ազատ Յնորքի թերթերը բուսան.
Սրտիս դաշտերում Մաղկունքը վառւեց...
Անմահ յոյսերի երազուն Շուշան
Երկնի Բուրմունքով իմ Կեանքը լցրեց...

* * *

Անցան տարիներ.
Ձախորդ օրերի անդուծ Անիւներ
Մէկ-մէկ փշրեցին վարդերն իմ Աւետան.
Եւ Կոյս Տենչանքիս Արեւն ու Աստղեր
Մէկի-կ ու մէկի-կ ընկան... ան, կորան...

* * *

Ես ծունկ չօքեցի
Մռայլ այս Կեանքի Սեղանի առջև,
Աղերս մեկնեցի...
Արցունքը ծորաց... և ծով հեղեղւեց...
Եւ վեհ Սրբութեան կեանքի Բարձունքից,
Ամպի պէս զժողոյն, Լոյսի պէս աննիւթ,
Կայծակի թափով Խորհուրդը կենաց,
Որպէս վառ Երազ կանգնեց իմ զիմաց...
Մըրիկը պայթեց... զըրզաց Որոտ...
Ձարգանքը տիրեց անփայլ Սրտերին...
— Ես փառքն եմ Կեանքի, ես Միաբն եմ
Թափոտ—

Արեւ Մեծութեան...

Ով գիտէ ապրել... ապրել ու ըզգալ՝
Սրտի երկունքով Աշխարհի Յաւում.
Ով գիտէ անյաղթ տանել ու տոկալ
Վսեմ Լուսութեան այս Կոյս Տաճարում՝
Խորհուրդը Կեանքի—Աշխարհի կոչման
Լոկ նա կիմանայ հպարտ ու միայն...—

* * *

Սնյապ տենչահիւս Խորհուրդը Սրտի,
Ազատ Հոգու պէս, շէկ Շանթի նման,
Սյգպէս մրմնջաց մրմունջը փառքի,
Սյգպէս շշնջաց կոյս իզօր Գարնան...

* * *

Եւ Սիրտս ասես բարկ ծով վրդովւած.—
Ահեղ Այիքներ Զարի ու Բարու
Եկան զարկեցին Կրծքիս սեւամած...
Կեանքի Դառնութեան յորձանքը մթին
Եկաւ ու նետուեց Յոյսիս Ժայռերին...
Ես թափ տուեցի Թուերը Հոգուս,
Ուժգին զարկեցի Սրտիս լարերին...
Ու ես իմացայ, ու Միտքս զտաւ
Անյայտը Կեանքի...
Հեռու ափերին կանգնած վիթխարի՝

Անփայլ Լուսութեան տաճարն է խորհուրդ...
Կեանքի ահաւոր Մըրիկը զիտող
Բիւրեղ Լուսութեան դողդոջ խորանում
Թաղնւած է Գաղանիք—Իմաստը կենաց...
Թռիքէքը Մտքի...

* * *

Այնտեղ, ուր լեռներ, լեռներ աժդրհայ,
Որպէս քաջարի ու սերտ եղբայրներ,
Մէջք մէջքի տաւ՝ մռայլ, անվեհեր
Նայում են դէպի Երկինք անկողար.
Նայում ու բողոք զրկում առ Աստուած...
Այնտեղ ամեհի ժայռերը խոհուն՝
Նոթերը կիտած, ճակտով կնճռոտ,
Խոժոռ ու անհաշտ նայում են հեռուն...
Կեանքի ծովափին, ուր յաղթ Այիքներ
Կեանքի Արզանդից՝ փրփուրը հազած՝
Գալիս են հուժկո՛ւ, զալիս ու կրծնւմ
Ժէռ կուրծքը ափի... Որպէս վայրենի
Գաղան կատաղած, յուզւում են ուժգին,
Զարկւում են, զարկում... Ժայռեր կրճոտում...
Այնտե՛ղ, սեւամած Կեանքի ծովափին
Ես խոհ Լուսութեան տաճար հիմնեցի...
Երազ լուսութեան անհուն Խորանին
Ու սիրտս, ու Հոգիս ես զո՛ւ բերեցի...

* * *

Եւ շուրջը անհաս Գարնան Տաճարի
Մեռած իմ ըղծէր, մանուկ երազներ,
Անդարձ մանկութեան լոյզեր Բերկրանաց,
Այդ ողջը արնոտ հողում թաղեցի...
Եւ շուրջ կապեցին թախծոտ Շիրիմներ,
Մոմուռ հիւսեցին սղոր Տենչանքներ.
Խաչի փոխարէն լալկան ուռենիք
Ցաւոտ մրմունջով երգեր հնչեցին...
Եւ ես քար կտրած՝ փարթամ Լուսթեան
Խնկէ Խորանից ազնա ծակատով
Դէպ Կեանքը դարձայ...

* * *

Եւ կուրծքը ուռցուց մեծ Կեանքը արնոտ,
Եռանց... փրփրանց ահեղ յորձանքով.
Ալիք լեռնապէս՝ փրփուրը բերնին՝
Կատղած շան նման ոռնում էին գոռ...

* * *

Որպէս պարզամած լազուր զիշերին
Անխօս ամպերի սղոր կարաւան,
Որ լճու ու մնչի՛կ տնջնում է յուշիկ
Լուսնի առաջով ճամբան ծանձրալին, —
Սնէզ, լանց, հառաչանք Կեանքի անդունդից

Ելան շարէշար,
Եկան ու անցան աչքիս առաջից...

* * *

Որպէս լուս ու մութ պահին վաղորդեան
Ծիւ-ծիւ թռչուններ շարան ու շարան
Ճախրում են օդում, թռչում են հեռուն,
Արիւն ովկեանի հեռո՛ւ ամբերից
Ցոյէ՛ր ու ցոլքե՛ր եկան քրքիջով,
Եկան... և նորից անհետ էլ կորան...

Եւ զրչափ ջիւան Կեանքի հատորներ՝
Արիւն ալեաց հետ քշուոյ խառնիխուռ...
Եւ զրչափ հալմաշ խղճով հոգիներ,
Տառապած Սրտի հառաչ ու մոմո՛ւռ,
Ոսկի Անուրջի ցրտացած մոխի՛ր —
Հոսանքը ալեաց քշում էր հեռուն,
Քշում ու նետում ամփի ժայռերին...

Տեսայ ես Կապանք... Շղթանց... Գերութի՛ւն...
Ամե՛ն, ամե՛ն ինչ տեսայ բարկ ծովում.
Եւ հպարտ Մաքի կնճիռը խոժոռ
Բսնում էր ճակախ, անվե՛րջ խառնում...

* * *

Եւ շատ Գարուններ փարթամ հոխութեամբ
 Զառքար պճրանքով եկան ու անցան,
 Անթիւ Զմեռներ սրտմաշուկ շնչով
 Տանջանք բերեցին, անդարձ էլ կորան...
 Եւ շատ, շատ անգամ Գարնան գալստեան
 Երազ թռչուններ համբոյր քրքրիչով
 Լոյսի՜ Յողթանակ, Արե՛ւ երգեցին...
 Եւ շատ, շատ անգամ Աշնան շնչի տակ
 Ալ-բալ կանաչներ թառամ թռչնեցին...
 Սրտերը խամրած, մոխիր հոգիներ,
 Ամեն, ամեն ինչ հզօր ժամանակն
 Դժխեծ, մահասփիւռ իր մեծ Թւի տակ
 Քշում էր դէպի Մշուշն Անցեալի...

* * *

Եւ ես իմացայ Գալուստր Գարնան,
 Ու Սիրտս զգաց իմաստը կեանքի...
 Մենակ ապրելու անհուն Յնորքի—
 Ազատ ապրելու անհաս Տենչանքի
 Հպարտ Խորանումն է Փառքը կենաց...

* * *

Հեռու Ստութեան այն ծովը գծուծ,
 Որի մէջ լողում, նեխում են Սրտեր.
 Մոռա... սո՛ւտ... չըկայ Սէր, չըկայ Մերձաւոր.
 Մարդիկ չեն կարող իրար հասկանալ,
 Անկե՛ղծ ու հոգե՛ղ իրար նւիրել...
 Եւ լոկ այն ատէն Գարունը կրգայ,
 Կըդայ Վեհութեան Խորհուրդը կեանքի,
 Երբ Արեան ծովում,—միշտ առանց Սիրոյ,
 Որ յաղթ Մեծութեան անկումն է միայն,—
 Արիւն Ալիքի կարկաչ երգի տակ
 Սուրբ ծնունդ առնէ իմաստը Մտքի,
 Եւ Աստուած դառնայ մեր Եսը անյագ...

1904. Յունւար,
 Փետրւար

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԱՄԵԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ
ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵԻԵԱԼ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ-
ԹԻԻՆՆԵՐԸ.

1. Բէօրնսօն՝ կազմեց Ե. Թոփչեան . . . 10 Կ.
2. Մաչմեղ՝ » » » . . . 7 »
3. Մեօրոպ Մաշտոց՝ կազմեց Ե. Թ. . . 5 »
4. Սահակ Պարթև՝ » » . . . 5 »
5. Հառւպաման՝ » » . . . 15 »
6. Մեծն Ներսէս՝ » » . . . 5 »
7. Զրազաշտ կազմեց Մ. Թաճաճշեան . . . 7 »
8. Ընտրութիւն կաթնատուների (26 պատկ.)
Գ. Մեծատուրեանի 15 »
9. Ռ. Վերթով՝ կազ. Ս. Բուդուղեան . . . 25 »

ԸՈՒՄՈՎ լոյս է տեսնելու՝

ՊՈԼՂԻՆ.

Պատրաստ է տպագրութեան համար՝

Ա. Բալանթար.—Հանրամատչելի ձեռնարկ կաթ-
նատնտեսութեան:

Պատրաստուում են նոր հրատարակութիւններ:



ԴԻՍԵԼ՝

1) С.-Петербургъ: У. М. Арамянцо Ан-
ская 38.

2) Тифлисъ: Книжный магазинъ Тумтен-
бергъ.

3) Баку: М-во „Прометейс“.
кая д. Амирового.

ՀՀ Ազգային գրադարան



NL0348704

ԳԻՆՆ Է 30 ԿՈՂ.

37582